

տէական մեծ դադարները ու մեծ արուեստի աւելի ներդաշնակ միաձուլութեամբ:

Դանտէի «Դժոխք»ը, աւելի քան «Քաւարան»ը եւ «Դրախտ»ը, հայ ընթերցողին ծանօթ է «Բազմալէպ»ում լոյս տեսած հատուածական թարգմանութիւններով եւ ապա Ղազիկեանի թարգմանութեան երեք հրատարակութիւններով (1902, 1910, 1926):

Հետեւաբար յարմար դատեցինք զանց առնել «Դժոխք»ը եւ «Բազմալէպ»ին տրամադրել երկուական երգ «Քաւարան»ից եւ «Դրախտ»-ից, իբրեւ նմոյշ մեր նոր ձեռնարկի:

Անհրաժեշտ նկատեցինք հակիրճ ծանօթութիւններ տալ միայն երկու տեղ «Դրախտ»ի երկու երգերից, որտեղ թարգմանութեան փոփոխութիւնը համաձայն բնագրի՝ պէտք զգացրեց նաեւ զանազան արուեստի այլազանութեան երկու երեւոյթների բացատրութիւնը, որը բնականաբար բացակայ էր 1969 թ. հրատարակութեան մէջ:

Նկատելի դարձնելու համար «Քաւարան»ի եւ «Դրախտի» ներկայ երգերի տարբերութիւնը 1969 թ. հրատարակութիւնից, այստեղ կը նշենք այն տողերը կամ եռատողերը, որոնց մէջ մենք կատարել ենք բառական կամ կառուցութեամբային փոփոխութիւններ:

ՔԱԻԱՐԱՆ Լ. 24, 28, 32-33, 35-36, 50-51, 56, 62, 65-66, 70-72, 89-90, 99, 106, 108, 110, 126, 127, 129, 133, 136-137, 140-141:

ՔԱԻԱՐԱՆ ԼԱ. 8, 17, 31, 33, 38, 46-48, 50-51, 54, 64-66, 72, 75, 76-78, 79, 82-84, 85, 89, 91, 98, 101, 103-105, 109-111, 113, 122-123, 127-129, 134:

ԴՐԱԽՏ ԺԹ. 2-3, 8, 17, 23, 25, 28, 35-36, 38, 42, 47-48, 56, 62-63, 66, 67-68, 77-78, 98-99, 100, 103-104, 111, 112, 115, 117, 118-120, 121-123, 124, 126, 127, 130-132, 136-138, 139, 144, 145-146:

ԴՐԱԽՏ Ի. 8-9, 10-11, 16, 18, 31-33, 35-36, 41, 49-51, 63, 64-66, 67-69, 70-72, 88-90, 91-93, 94-96, 97, 99, 100-102, 104-105, 106-107, 120, 122-123, 124, 126, 130-132, 139, 141, 147:

Ա. ՏԱՅԵԱՆ

Երեւան, 20 Օգոստոս 1972

ՔԱԻԱՐԱՆ. ԵՐԳ Լ.

Նախորդ երգում նկարագրուած թափօրը կանգ է առնում եւ հեռուից կողքի վրայ երեւում է քողածածուկ Բէատրիչէն, դիմաւորուած հրեշտակների ցնծութեան երգերով եւ ծաղիկներով: Բէատրիչէն յանդիմանում է Դանտէին իր յանցանքների համար:

Երբ բացավառ եօթ ջահերը կանգ առան,
Որ թափօրի համար եղան ուղեցոյց,
Ինչպէս աստղերն ուղիւն նշում են մերքան,

4 Ով իր նաւը նաւահանգիստ է տանում, —
Պատկառելի այն այրերը իմաստուն,
Որ Գրիֆոնից առաջ էին ընթանում,

7 Կանգ առնելուց յետոյ իսկոյն շուռ եկան
Դէպի կառքն այն հոյակապ ու շքեղ,
Որպէս իրենց գմայլանքի առարկան:

10 Նրանցից մէկն, ինչպէս էակ մերշնչեալ,
Երեք անգամ «Ե՛կ, հարսն» երգեց բարձրաձայն,
Եւ այդ երգը կրկնեց խումբը միացեալ:

13 Զերթ երանեալք երբ վերջին կոչը լըսեն,
Փութով պիտի յառնեն իրենց դամբանից
Եւ մարմնացած՝ ալէլուիա օրհներգեն,

16 Այսպէս ձայնից այն ծերունու գերպատիւ
Աստուածային կառքի վրայ բարձրացան
Յաւերթ կեանքի բանքերները բազմաթիւ:

19 «Օրհնեալ որ դասդ» օրհներգեցին միախառն
Եւ սփռելով շուրջն ու վրան ծաղիկներ,
Անկայքին. «Շուշանս ածէք լիարուռն»:

22 Ինչպէս յաճախ երբ օրը նոր է ծագում,
Արեւիքը վարդագունում է համակ,
Իսկ երկինքը պայծառօրէն յստակում.

25 Եւ նորածագ արեւի դէմքը պարկեշտ
Ծածկւում է լինում այնքան նուրբ փողով,
Որ կարող է տեսանելի դառնալ հեշտ,

- 28 Այսպէս քեթեւ մի ամպի մէջ վառ ծաղկանց —
Որ նետուելով հրեշտակային ձեռքերից՝
Թափուում էին չորս դին կառփի յաղթապանծ, —
- 31 Մի կին տեսայ ձիքենիով պսակուած,
Ճերմակ ֆողով, կանաչաւուն բեհեզով
Եւ ոսկեգոյն պարեգօտով պարուրուած:
- 34 Եւ հոգիս, որ վաղուց ի վեր չէր կըրել
Այն յուզումն ու այլայլութիւնը, որոնք
Կեանքում նրա ներկայութեամբ եմ ապրել,
- 37 Առանց նրան պարզ տեսնելու կանխագգաց
Մի գորութեամբ, որ նրանից էր բխում,
Վազնջական սիրոյ ոյժը չըհանգած:
- 40 Հայեացքս հագիւ հանդիպեց այն գորութեան,
Որ կարեւոր խոցել էր ինձ, երբ ես դեռ
Զէի ելած իմ հասակից մանկութեան,
- 43 Դարձայ ձախ կողմ մի բնագոյով ինքնամուգ,
Որով մանուկն իր մայրիկին է փնտռում,
Երբ իր սրտում ունի մորմոք կամ երկիւղ,
- 46 Վիրգիլիոսին հաղորդելու. «Զգացի
Համակ սարսուռ անօթներում իմ արեան,
Ճանաչում եմ ես նշաններն հին բոցի»:
- 49 Բայց Վիրգիլը թողել էր ու հեռացել,
Վիրգիլը, իմ հոգեհայրը ֆաղցրագոյն,
Վիրգիլը, որ փրկութիւնս էր յամանձել:
- 52 Այն բոլորը, ինչ կորցրել է մայր Եւան,
Զարգելեց որ դէմքս՝ ցօղով լուացուած՝
Նորից եղծուէր արցունքներով իմ ծորան:
- 55 «Դանտէ, մի՛ լար որ Վիրգիլիոսը գնաց.
Մի՛ լար, մի՛ լար ամենեւին, զի հիմա
Հարկ է ուրիշ խոցի համար լինես լաց»:
- 58 Զերթ ծովակալն, որ տեսնելու է գալիս
Անձնակազմին իր եմքակայ մաւերի
Եւ ամենքին սիրտ ու կորով է տալիս,

- 61 Այսպէս երբ ես դարձայ ի լուր իմ անուան,
Որ այստեղ լոկ ակամայից է նշուում,
Կառփի ձախ կողմ տեսայ կնոջ անմամն,
- 64 Որ փչ առաջ ինձ երեսաց ֆողարկուած
Հեղեղի տակ ծաղիկների համասփիւռ,
Իր աչքերը դէմի ավից ինձ ուղղած:
- 67 Թէեւ ֆողը, որ իջնում էր գլխից վար,
Շրջանակուած Միներվայի ռստերով,
Թոյլ չէր տալիս, որ նա որոշ երեւար,
- 70 Բայց նա իր սէգ ու տիրական կեցութեամբ
Շարունակեց, ինչպէս նա, ով ամէնից
Ազդու խօսքերն յարմար պահին է ձգում.
- 73 «Լա՛ւ նայիր, լա՛ւ, Բէատրիչէն եմ ես արդ.
Ի՞նչպէս եղաւ, որ հանցիւր այստեղ գալ,
Զգիտե՛ս որ երջանիկ է այստեղ մարդ»:
- 76 Ես աչքերս դէպի գետը հակեցի.
Երբ ինձ տեսայ ջիմջ ջրերի մէջ նրա,
Ճանաչեցի ինձ եւ ամօթ գգացի:
- 79 Ինչպէս խիստ է մայրն երեւում իր որդուն,
Այսպէս նա ինձ խիստ երեսաց, բայց նրա
Բարկութեան մէջ ես գգացի բարութիւն:
- 82 Նա լուռ մնաց. իսկ հրեշտակներն համաձայն
Օրհներգեցին. «Ո՛վ տէր, ի քեզ յուսացայ»:
Եւ «գոտս իմ»-ով վերջացրին սաղմուն այն:
- 85 Ինչպէս ձիւնը սառնամուն է իտալիոյ
Ողնաշարի անտառներում կենդանի,
Ցուրտ շնչի տակ ֆամիների Սլաունիոյ,
- 88 Ապա հենց որ ստուերագուրկ աշխարհից
Հոգւմ է փչում, սառնը հալչում է տակաւ,
Այնպէս ինչպէս մամը հալչում է հուրից,
- 91 Այսպէս եղայ մինչեւ երգելը նրանց,
Որոնց ձայնի հնչիւնները թաւշային
Ուղեկցում են յաւերժալուր դաշնութեանց.

- 94 Բայց երբ նրանց աւաչի մէջ աղուական
Զգացի գութ, աւելի քան ասէին՝
«Ո՛վ կին, ինչո՞ւ նրան տանջում ես այդքան»,
- 97 Սառոյցը, որ սիրտըս սեղմել էր ուժգին,
Դարձաւ արցունքի եւ հառաչանքի, եւ բերնից
Ու աչքերից պոռթկաց իմ վիշտը ներքին:
- 100 Սակայն նա միշտ կանգնած անշարժ, յոտնկայս՝
Յիշատակուած կողմը կառփի սրբազան,
Ուղղեց գրքոտ էակներին խօսքերն այս.
- 103 «Դուք հսկում էք յաներժութեան մէջ այնպէս,
Որ ոչ մի դէպք ընթացքի մէջ դարբերի
Գաղտնածածուկ ու անյայտ չի մնում ձեզ.
- 106 Իմ պատասխանն անշուշտ նրան է ուղղուած,
Ով լալիս է ահա այնտեղ, որպէսզի
Վիշտը լինի գուգակշիռ իր մեղաց:
- 109 Եւ ոչ միայն ազդեցութեամբ աստղերի,
Որ ամէն գոյ մի վախճանի են ուղղում,
Ըստ իրենց մէջ պարունակած ուժերի,
- 112 Այլեւ առատ շնորհներով երկնային
(Որ հեղում են այնքան բարձր ակունքից,
Ուր չեն հասնում հայեացքները մերային)
- 115 Նա նոր կեանքում սկսում էր գործնալ,
Եւ հակումներն, որոնցով էր նա օժտուած,
Կարող էին ամէն գծով զարգանալ:
- 118 Սակայն մի հող ինչքան լինում է բերրի,
Այնքան վատ ու անպտղաբեր է դառնում,
Երբ մնում է նա անմշակ ու վայրի:
- 121 Ես միառժամ նրան նեցուկ կանգնեցի,
Եւ միմիայն իմ կենդանի գոյութեամբ
Տանում էի նրան ճամբով ուղղացի:
- 124 Բայց երբ հասայ շեմին երկրորդ հասակի
Ու հեռացայ մահկանացու աշխարհից,
Նա ինձ լքեց եւ յանձնուեց այլ կեանքի:

- 127 Երբ որ մարմնից ես բարձրացայ առ հոգի,
Եւ ամեցի գեղեցկութեամբ, գորութեամբ,
Դարձայ նրան նուազ հաճոյ ու յարգի:
- 130 Նա ընթացաւ փանապարհով մոլորուն,
Ընկնելով սին բարիքների ետեւից,
Որ չեն տալիս ինչ խոստանում են մարդուն:
- 133 Ներշնչումներս անգամ անգոր մնացին,
Որոնցով ես նրան դարձի կոչ արի,
Նա այնքան քիչ փոյթ ունեցաւ այդ մասին:
- 136 Այնքան ընկաւ զառածանքի մէջ նա խոր,
Որ մի ճար կար միայն նրան փրկելու —
Ցայց տալ նրան հոգիներին մեղաւոր:
- 139 Դրա համար այցելեցի ես Դոնիսի,
Ուղղելու իմ լալագին հայցը նրան,
Որ բերել է սրան վայրն այս լուսաշող:
- 142 Աստուածային վնասի խախտում կը լինէր
Լեթէ հասնել եւ ըմպել ջուրն անմահ
Առանց գինը վնասելու փառքեր՝
- 145 Արցունքներով ստրջանքի ու գոջման:

ՔԱԽԱՐԱՆ. ԵՐԳ ԼԱ.

*Դանտէն խոստովանում է իր մեղքերը, որոնցից է վերջոյ մաքրուում է միջը-
նուելով Լեթէի ջրերի մէջ գեղանի մի կնոջ (Մաթիլդա) ձեռքով. վերջինս նրան
հանում է Լեթէի հանդիպակաց ափը, ուր չորս կանայք նրան տանում են կառքի
մօտ. ապա երեք ուրիշ կանանց միջնորդութեամբ Բէատրիչէն քողազերծուում է եւ
երեւում է Դանտէին իր բովանդակ փայլով:*

Խօսքը արդէն ինձ ուղղելով շեշտակի,
Որ ինձ այնքան սուր ու խիստ էր թուացել,
Շարունակեց. «Ով դու, որ սուրբ գետակի

- 4 Այն անիւն ես, ասա՛, ասա՛, միշտ չե՞մ ես:
Այսքան ծանրը մեղադրանքները քո դէմ
Հարկ է որ դու քո խօսքերով հաստատես»:

- 7 Այնպէս էի ես սահմակած ու սմբած,
Որ իմ ձայնը, բարձրանալով ի ներքուստ,
Մարեց դեռեւս շնչափողից դուրս չեկած:
- 10 Քիչ սպասեց, ապա յարեց նոյն տունով,
«Ի՞նչ ես խորհում, պատասխան տուր, քանի դեռ
Քո մեղքերը չեն մաքրուել լեթէով»:
- 13 Խռովքս ու վախս, ուժեղացած առաւել,
Բերնիցս այնքան թոյլ մի «այո» կորզեցին,
Որ կարող էր աչքը միայն նշմարել:
- 16 Ի՞նչպէս աղեղն, երբ այն լարուած է անչափ,
Բեկանում է այնպէս, որ նետն արձակուած
Թիրախին է դիպչում նրազ ուժգնութեամբ,
- 19 Այսպէս եւ ես ննչուած ծանրը իմ բեռից,
Դուրս պոռթկացի արցունքներս ու հառաչներս.
Եւ իմ ձայնը թոյլ դուրս եկաւ իմ բերնից:
- 22 Եւ նա ասաց. «Յորդորներումս անցեալի,
Որ քեզ մզում էին սիրել այն Բարին,
Որից այն կողմ ոչինչ չկայ անձկալի,
- 25 Ի՞նչ արգելակ կամ ի՞նչ կապանք դու գտար,
Որ քո յոյսն ու արիւթիւնը կորցրիր
Ընթանալու ճանապարհով ուղղատար:
- 28 Ի՞նչ հեշտական կամ շահեկան բան տեսար
Աշխարհային բարիքների մէջ ունայն,
Որոնց այնքան հանդիսացար սիրահար»:
- 31 Արձակելով կրծքից մի դառն հառաչանք,
Ես շրթներըս դժուարութեամբ բաց արի
Եւ պատասխան տալու համար արի ջանք:
- 34 Ես ասացի. «Բարիքները աշխարհիկ
Ինձ գերեցին իրենց պատիր հանոյքով,
Երբ ձեր մահով կորաւ ձեր դէմքը քաղցրիկ»:
- 37 Եւ նա ասաց. «Ծածկելով կամ ծխտելով
Մարդ չի խաբի Դատաւորին երկնաւոր,
Որ դատում է մարդկանց իրենց գործերով:

- 40 Իսկ երբ մեղքը բերանով է յայտնւում,
Այն ժամանակ մեր ասեանում երկնային
Շեղքին հետանն հակառակ է պտըտում:
- 43 Որպէսզի դու աւելի լաւ իմանաս
Քո սխալը, եւ որպէսզի այլ անգամ
Սիրեմների դիւքանքներին դիմանաս,
- 46 Հանգստացիր եւ ինձ լըսիր փութակամ.
Իմ մահը քեզ պէտք է դրդէր ընթանալ
Այլ ուղղութեամբ, քան ընթացար դու ցայնժամ:
- 49 Բնութիւնը կամ արուեստը քեզ բնաւ
Ցոյց չեն տրւել գեղեցկութիւն մի այնպէս,
Ինչպէս իմն էր, որ քաղուեց ու հող դարձաւ:
- 52 Եթէ մահովս կորցրիր գանձն այդ առաւել,
Ապա էլ ի՞նչ մահկանացու բան ուրիշ
Կարող էր քո սրտի մէջ տեղ գրաւել:
- 55 Հիասթափուած բարիքներից սին ու սուտ,
Դու պէտք էիր ինձ հետեւել միմիայն,
Ինձ, որ արդէն դարձել էի ոգի գուտ:
- 58 Դու պէտք էիր կծկել թեւերդ սըլացիկ,
Ենթարկուելու նոր պատրանքի կամ կընոջ
Կամ ինչ որ ա՛յլ ունայն քանի վաղանցիկ
- 61 Մատաղ ծիտն է լոկ վտանգի ենթարկուում,
Իսկ չափահաս թռչունի դէմ ի գուր է
Ծուղակ լարուում կամ պարսափար արձակուում»:
- 64 Մանուկն ինչպէս կանգնած լուռ ու ակնկոյր,
Կշտամբանքներ է լըսում եւ ամաչում,
Լիով իրեն ճանաչելով մեղաւոր,
- 67 Այսպէս էլ ես: Եւ նա. «Թէ որ վշտացար,
Լոկ լսելով, մօրուքդ վեր բարձրացուր.
Ինձ նայելով դու աւելի կը զգաս ցաւ»:
- 70 Բարձրացնելու համար դէմքըս դրի ոյժ,
Ոչ նրազ ոյժ քան այն, որով յաղթ կազմին
Սասանում է մեր հաղմերից սաստկախուժ,

- 73 Կամ Եարբասի երկրից փչող հողմերից.
Եւ դէմքի տեղ երբ մա մօրում գործածեց,
Ես զգացի թունոտ խայթը ակնարկից:
- 76 Ի վերջոյ երբ վեր բարձրացի դէմքս ես,
Նըկատեցի, որ հրեշտակները արդէն
Զէին սփռում ծաղիկներ խուռն ու պէս պէս:
- 79 Եւ ես տեսայ, դեռ աչքերով ոչ անոյթ,
Որ տիրուհիս հայեացքն ուղղել էր դէպի
Այն Գագանը, որ մի անձ էր երկրնոյթ:
- 82 Նա ֆօղով էր եւ երեւում էր հեռուանց,
Բայց թուաց թէ գերազանցում էր իրեն,
Աւելի քան գերազանցեց այլ կանանց:
- 85 Խղմիս խայթը այնքան եղաւ ահռելի,
Որ այն, ինչ ես սիրել էի նախապէս,
Հիմա դարձաւ իմ աչքերին ատելի:
- 88 Այնքան ճնշեց ինձ ծանրութիւնն իմ մեղաց,
Որ ուշաթափ ընկայ, եւ այն ինչ դարձայ,
Գիտէ մա, ով դրա պատճառն էր եղած:
- 91 Եւ երբ սիրտըս վերադարձրեց ուշքս ինձ,
Իմ վերելում տեսայ կնոջ մեմաւոր,
Որ ասում էր. «Բռնիր, բռնիր իմ ձեռից»:
- 94 Նա ինձ սուգեց գետում կոկորդիլս մինչեւ.
Եւ, փաշելով իր ետեւից, ընթացաւ
Ջրի վրայ ինչպէս մակոյկ մի թեթեւ:
- 97 Երբ մօտեցայ դէմի ափին անխըռով,
«Ցօղեա յիս»-ը երգունց այնքան փաղցրաձայն,
Որ չեմ կարող նկարագրել բառերով:
- 100 Գեղամի կիներ իր թեւերը բաց արաւ.
Բռնեց գլուխս եւ ներսուզեց ջրի մէջ,
Այնպէս որ ինձ ջուրը կուլ տալ հարկ եղաւ:
- 103 Ապա գետից ինձ ափ հանեց եւ գէջ գէջ
Ներկայացրեց ինձ չորս կանանց նազելի.
Եւ ամէն մէկն ինձ առաւ իր բազկի մէջ:

- 106 «Նիմֆաներ ենք այստեղ, երկնում՝ վառ աստղեր.
Բէատրիչէն աշխարհ չեկած տակաւին
Կարգընցինք մեքան որպէս նաժիշտներ:
- 109 Մենք կը տանենք քեզ մրա մօտ, իսկ երեք
Կանայք՝ որոնք աւելի խորն են տեսնում,
Քեզ կ'օգնեն որ տեսնես աչքերն իր արեգ»:
- 112 Այսպէս մեքանք բարբառեցին խորիմաց
Եւ ինձ տարան Գրիֆօնի կրծքի տակ,
Ուր կանգնած էր Բէատրիչէն մեր դիմաց:
- 115 Ինձ ասացին. «Յառիր հայեացքդ անձկակէզ:
Մենք քեզ քերինք աչքերի մօտ այն գլուխտ,
Ուրկից Սէրը իր նետերով խոցեց քեզ»:
- 118 Հագար իղձեր, ինչպէս բոցեր բորբոքում,
Ինձ մղեցին նայել պայծառ աչքերին,
Որ Գրիֆօնի վրայ էին բեւեռում:
- 121 Ինչպէս արեւն հայելու մէջ է ցոլում,
Այսպէս կրկնակ այն Գագանը մեքանք մէջ
Մերք մի տեսով, մերք այլ տեսով էր շողում:
- 124 Ո՛վ ընթերցող, ինքզինդ դատիր թէ որքան
Ես զարմացայ, երբ Գագանը չէր շարժում,
Բայց փոխում էր մրա պատկերն իրական:
- 127 Մինչ իմ հոգին, հիացքով ու խինդով լի,
Ճաշակում էր այն սնունդը Գերբնական,
Որից բնաւ յագեցնալ չէր կարելի,
- 130 Այն միւս երեք կանայք եկան ընդառաջ
Ազնուական շարժումներով, երգելով
Հրեշտակային իրենց ձայնով փաղցրաւաչ:
- 133 Երգում էին. «Բէատրիչէ սրբափառ,
Աչքերդ ուղղիր քեզ նշխարում այս մարդուն,
Որ քեզ համար կտրեց այնքան ճանապարհ:
- 136 Շնորհ արա բանալ դէմքդ լուսայորդ,
Որպէսզի մա կարողանայ պարզ տեսնել
Քո ֆօղարկած գեղեցկութիւնը երկրորդ»:

- 139 Օ՛ր ցոլացում յաւերժական վառ լոյսի.
Ո՞ր օժտուածը փանփարներով բընատուր,
Կամ ո՞ր տփնոդն ստուերի տակ Պառնասի,
- 142 Պիտի չըզգար իրեն անգօր ու անմար,
Եթէ փոքրէր քեզ պատկերել այն պահին,
Երբ երկնային գեղեցկութեամբ քո անմառ
- 145 Երեւացիք անօդ՝ օդում արփային:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՁ

(Շար. Բագմավէպ, 1972, ք. 2-3, էջ 303)

16. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԵՐՈՒՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Վաղամեռիկ բանաստեղծին գործերը, «արցունքոտ քանի մը տողեր», գոնէ մասամբ գրուեցան հայ գրական հրապարակին վըրայ՝ ըստ իր վերջին թախանձանքին՝ անոնց արեւ չնորհելու: Այդ թախանձանքը նուիրական աւանդի մը պէս կ'իյնար սիրող սրտերու մէջ, երբ ան կ'երթար դամբանի մը խորը անմահութիւն երազելու: Բայց ժամանակները ու միջավայրը թոյլատու չեղան դոհացնելու զինքը լիովին:

Արդարեւ Դուրեանի գործերուն ամբողջականութիւնը երկարատեւ մնացած է կնճռոտ հարց, հակառակ 1872ի առաջին հրատարակութեան (մասնակի), Սկիւտարի «Ընթերցասիրաց Ընկերութեան» կողմէ, 1893ի երկրորդ մասնակի հրատարակութեան՝ կատարուած Բ. Էքսէրճեանէ, եւ բոլոր յաջորդ տպագրութիւններու: 1971ի Պետ-հրատի լիակատար ժողովածուն է միայն որ յաջողած է համախմբել մինչեւ այսօր ձեռք բերուած գործերու հատակոտոր կամ լրիւ ամբողջականութիւնը՝ նկատմամբ Տաղերուն, Թատրերգութիւններուն, Նամակներուն եւ քանի մը յօդուածներուն: Սակայն պատանի բանաստեղծին զրչէն ելած թատերական թարգմանութիւնները եւ կարգ մը ինքնագիր խաղերը, որ չկան մէջտեղ, պէտք է դեռ փնտռուին, եթէ պիտի չհամարինք առ յաւէտ կորսուած:

Անհոգութիւն մէկ կողմէն, տնտեսական դժուարութիւն միւս կողմէն, անկարելի դարձուցած են իր կենդանութեանը լոյս ընծակել զանոնք եւ կամ մահէն անմիջապէս ետք: Անուրանալի են Բ. Էքսէրճեանի մը ճիշդերը, Արա Գալայճեանի (Երուսաղէմ) փոյթը բնագրական հաւատարմութեամբ հրատարակութիւն մը տալու անոր